

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2016թ. մարտի 31-ի

նիստի /արձ. 10/

1. Հավանություն տալ ԵԹԿՊԻ-ի մեթոդխորհրդի 2016թ. մարտի 20-ի նիստի թիվ 2 որոշմանը և հաստատել ԵԹԿՊԻ-ի մագիստրատուրայի 2016-2017 ուս. տարվա առկա ընդունելության կանոնակարգը:

2. Հաստատել ԵԹԿՊԻ-ի մեթոդխորհրդի 2016թ. մարտի 20-ի նիստի որոշումը և «ԵԹԿՊԻ-ի ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգում» ներմուծել ներքոհիշյալ կետերը՝

- 2.8 կետը հետևյալ բովանդակությամբ՝

«Ուսանողների ամփոփիչ ատեստավորման արդյունքները գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար» (կրեդիտային համակարգում՝ տառային գնահատականներով և իրենց թվային համարժեքներով)»,

- 5.6 կետը հետևյալ բովանդակությամբ՝

«ԵԹԿՊԻ-ի ուսանողական համակարգում ընդգրկված և ազգային բանակ գորակոչված սովորողը, բանակից գորացրման օրվանից մեկ ամսվա ընթացքում իր ուսանողական իրավունքները չվերականգնելու դեպքում հեռացվում է ինստիտուտից»:

2.1 Սույն կարգի՝

- 4.2 կետի 2-րդ նախադասությունում «Ուսումնական մաս» բառերը փոխարինել «Ուսումնական գործընթացի համակարգման բաժին» բառերով,

- 4.7 կետը խմբագրել և շարադրել հետևյալ բովանդակությամբ . «Միջանկյալ և եզրափակիչ ստուգումների ավարտից հետո դասախոսը ստուգման տեղեկագիրը գնահատականի հրապարակման օրը ներկայացնում է դեկանատ»:

- 5.2 կետում ՄՈԳ-ի նվազագույն շեմը 2,00-ի փոխարեն դարձնել 1,7-2,00:

2.2 ԵԹԿՊԻ-ում ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգում սույն որոշմամբ սահմանված լրացուցիչ (2.8 և 5.6) կետերի ամրագրումը, 4.7 կետի խմբագրումը և լրացումների կատարումը հանձնարարել իրավախորհրդատու Է. Մանասերյանին:

3. Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2014թ. հոկտեմբերի 23-ի N1191-Ն որոշումը, ԵԹԿՊԻ-ում և մասնաճյուղերում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ներքոհիշյալ մասնագիտությունների ուսումնական պլանների անվանումները վերաձևակերպել վերը նշված որոշմամբ հաստատված մասնագիտությունների և որակավորումների անվանումներին համապատասխան հետևյալ ձևաչափով`

I Բակալավրիատ

Մասնագիտության նախկին անվանումը	Մասնագիտության նոր անվանումը
1. 070200 Դերասանական արվեստ	021503.00.6 Թատերական արվեստ 021503.01.6 Դերասանական արվեստ
2. 070300 Ռեժիսուրա	021503.00.6 Թատերական արվեստ 021503.02.6 Ռեժիսուրա
3. 070700 Պարարվեստի ռեժիսուրա	021504.00.6 Պարարվեստի ռեժիսուրա 021504.01.6 Պարարվեստի ռեժիսուրա
4. 071300 Կինոարվեստ	021103.00.6 Կինոարվեստ 021103.01.6 Կինոարվեստ

5. 071400 Օպերատորություն	021101.00.6 Տեսալսողական արվեստ 021101.02.6 Օպերատորություն
6. 071900 Գեղանկարչություն	021301.00.6 Կերպարվեստ 021301.04.6 Թատրոնի, կինոյի և հեռուստատվորսի նկարչություն
7. 071700 Սոցիալ-մշակութային գործունեություն	021801.00.6 Արվեստի տեսություն և պատմություն 021801.01.6 Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում
8. 070400 Թատերագիտություն	021801.00.6 Արվեստի տեսություն և պատմություն 021801.04.6 Թատերագիտություն
9. 072500 Կինոգիտություն	021801.00.6 Արվեստի տեսություն և պատմություն 021801.05.6 Կինոգիտություն
10. 071200 Գրական ստեղծագործություն	021801.00.6 Արվեստի տեսություն և պատմություն 021801.06.6 Սցենարադրամատուրգիական արվեստ
11. 072400 Հագուստի մոդելավորում	021201.00.6 Դիզայն 021201.03.6 Հագուստի մոդելավորում
12. 071800 Համակարգչային գեղարվեստական նախագծում	021201.00.6 Դիզայն 021201.04.6 Համակարգչային գրաֆիկա
13. 070600 Պարարվեստ	021502.00.6 Կատարողական արվեստ 021502.03.6 Պարարվեստ

II Մագիստրատուրա

Մասնագիտության նախկին անվանումը	Մասնագիտության նոր անվանումը
1. 070200 Դերասանական արվեստ	021503.00.7 Թատերական արվեստ 021503.01. 7 Դերասանական արվեստ
2. 070300 Ռեժիսուրա	021503.00. 7 Թատերական արվեստ 021503.02. 7 Ռեժիսուրա
3. 070700 Պարարվեստի ռեժիսուրա	021504.00. 7 Պարարվեստի ռեժիսուրա 021504.01. 7 Պարարվեստի ռեժիսուրա
4. 071300 Կինոարվեստ	021103.00. 7 Կինոարվեստ 021103.01. 7 Կինոարվեստ
5. 071400 Օպերատորություն	021101.00. 7 Տեսալսողական արվեստ 021101.02. 7 Օպերատորություն
6. 071900 Գեղանկարչություն	021301.00. 7 Կերպարվեստ 021301.04. 7 Թատրոնի, կինոյի և հեռուստատվորտի նկարչություն
7. 071700 Սոցիալ-մշակութային գործունեություն	021801.00. 7 Արվեստի տեսություն և պատմություն 021801.01. 7 Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում
8. 070400 Թատերագիտություն	021801.00. 7 Արվեստի տեսություն և

	<p>պատմություն</p> <p>021801.04. 7 Թատերագիտություն</p>
9. 072500 Կինոգիտություն	<p>021801.00. 7 Արվեստի տեսություն և պատմություն</p> <p>021801.05. 7 Կինոգիտություն</p>
10. 071200 Գրական ստեղծագործություն	<p>021801.00. 7 Արվեստի տեսություն և պատմություն</p> <p>021801.06. 7 Սցենարադրամատուրգի-ական արվեստ</p>

3.1 Սույն փոփոխությունները ուժի մեջ են 2016-2017 ուս. տարվա ընդունելությունից սկսած:

4. Կրթության և մշակույթի ոլորտում ներդրած ավանդի համար՝

4.1 Դերասանի վարպետության և ռեժիսուրայի ամբիոնի դոցենտ Սաթենիկ Զավենի

Մաթևոսյանին ներկայացնել ՀՀ մշակույթի վաստակավոր գործչի պատվավոր կոչման,

4.2 ծննդյան 85-րդ տարեդարձի կապակցությամբ Բեմական շարժման և մեներգի ամբիոնի պրոֆեսոր Նելլի Սողոմոնի Մարությանին ներկայացնել ՀՀ կրթության և գիտության նախարարության ոսկե մեդալի շնորհման,

4.3 ծննդյան 75- ամյակի կապակցությամբ Բեմական շարժման և մեներգի ամբիոնի պրոֆեսոր Զեմֆիրա Արտաշեսի Երիցյանին ներկայացնել ՀՀ կրթության և գիտության նախարարության ոսկե մեդալի շնորհման,

4.4 ծննդյան 75- ամյակի կապակցությամբ Բեմական շարժման և մեներգի ամբիոնի ավագ դասախոս Գևորգ Ղարիբի Եղիազարյանին ներկայացնել ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալի շնորհման:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան

